

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 10

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա  
գիտական խորհրդի առցանց<sup>1</sup> նիստի

ք.Երևան

27 մայիսի 2020թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 20-ը:

**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» կրթական ծրագրի մոնիթորինգի հաշվետվության քննարկում և հաստատում (խմբի ղեկավար՝ Ա.Ս. Սաղյան):

Զեկուցող՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ  
Հայարվիի Սիմոնյան

2. Ընթացիկ հարցեր:

**ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» կրթական ծրագրի մոնիթորինգի հաշվետվության քննարկում և հաստատում

**Լսեցին՝** Գիտական խորհրդի նախագահ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, այն մասին, որ Ֆարմացիայի ինստիտուտի

---

<sup>1</sup> Արտակարգ դրության պատճառով նիստ անց է կացվել առցանց

մագիստրատուրայի «Ֆարմացիա» կրթական ծրագրի մոնիթորինգի և բարելավման նպատակով ստեղծվել է մոնիթորինգի հանձնաժողով, որի կողմից իրականացվել է վերը նշված ծրագրի գնահատում, ուժեղ և թույլ կողմերի վերհանում:

Հաշվետվությունը մանրամասն ներկայացնելու համար Ա. Սադյանը ձայնը տվեց Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանին:

**Ելույթ ունեցավ** Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, ով մանրամասն ներկայացրեց մոնիթորինգի խմբի կողմից կազմված հաշվետվության բոլոր կետերը (հաշվետվությունը կցվում է): Նա հավելեց, որ մոնիթորինգի արդյունքները քննարկվել և հավանության են արժանացել Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նիստում (որոշում թիվ 1, 22.05.20), համաձայն որի.

- Ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները վերլուծված են բավականին համակողմանիորեն և յուրաքանչյուր հարցին տրված է բացատրություն:
- Մանրամասն ներկայացված են դեղագործական ընկերությունների և, ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գիտակրթական կենտրոնների հետ համագործակցությունները և դրանց արդյունքները:
- Բազմակողմանիորեն ներկայացված է կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, բերված փաստացի վկայությունները հիմնավոր և համոզիչ են:
- Կրթական ծրագրի բարելավմանը ուղղված պլանավորված աշխատանքները իրատեսական են:
- Հատուկ ուշադրության է արժանի փորձակենդանիների վիճարումի ստեղծման վերաբերյալ առաջարկը:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Սահակյանը, Ռ. Հովհաննեսյանը, ովքեր ներկայացրեցին իրենց դիտողություններն ու առաջարկությունները՝ հաշվետվության որոշ դրույթների վերաբերյալ: Գիտխորհրդի առցանց նիստին ներկա անդամները միաձայն

ընդունեցին բոլոր առաջարկությունները և որոշեցին դրանք ներառել հաշվետվության մեջ:

**Որոշեցին՝**

1. «Ֆարմացիա» կրթական ծրագրի բարելավման նպատակով 2021-2022 ուս. տարիների ընթացքում Ֆարմացիայի ինստիտուտում բացել «Դեղերի որակի հսկման ու մոնիթորինգի» գիտաուսումնական կենտրոն և համապատասխան նոր մագիստրոսական ծրագիր:
2. ԵՊՀ կենտրոնական վարչակազմին ներկայացնել առաջարկ՝ նոր դեղատնային բանջարանոցի և փորձակենդանիների վիվարիումի ստեղծման վերաբերյալ:
3. Դրական գնահատել Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» կրթական ծրագրի մոնիթորինգի հաշվետվությունը և սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն:

**2. Ընթացիկ հարցեր:**

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան